



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Успех ✓
267

1851

II 44⁷

2003

[Faint blue ink handwriting, possibly a name]

[Faint blue ink handwriting, possibly a name]

[Faint blue ink handwriting, possibly a name]

372
5-71

[Faint blue ink handwriting]

160

Willis



Մեթոդ
267

II 7
44



1908
14

23056
41

Այս տարւոյս (1851) դեկտեմբեր ամսուն 27 ին հինգ շաբ-
թի օրը գլխաւոր Առաքելոց Պետրոսի և Պողոսի Նախագա-
հական Վարժարանին Պաշտպան Սուրբերուն տօնախմբու-
թիւնը ըլլալով՝ Գ. Գ. Անտոն Վ. Հասունեան նախագահ
Տէրը նոյն Վարժարանին մատրան մէջ բարերարաց դիտա-
ւորութեանը հանդիսաւոր պատարագը մատոյց ույետոյ
Պաշտօնն ալ կատարեց ներկայութեամբ վսեմափառ Վե-
րապայծառ Սեւիեան Ազգայետ Վարդապետի և այլ Յ.
Քահանայից : Պաշտօնէն առաջ նոյն Վարժարանին աշակեր-
տը Մկրտիչ Մինասեան ՚ի պատիւ Պաշտպան գլխաւոր Ա-
ռաքելոց հետևեալ ճառը զուրցեց :



4908 | 267-2003
41
1/8 266

Ի ՏՕՆԻ ԳԻՅՆՈՐ ԱՌԵՒԵԼՈՅՆ

ՊԵՏՐՈՍ և ՊՕՂՈՍ

ՊԵՏՐՈՍ և ՊՕՂՈՍ ԵՒ ԼՈՒԻՍ ԵՒ ԿԼԵՄԵՆՏԵՍ ԿՆԵՍՏԱՆԻՍ :

Այսպէս յապարհագրեալի աղմուկս առ ջինս իմ տկարութեամբս երկու խօսք խօսելու դեռ սկսած չսկսած, ու աշուրներս խորանէն ժողովրդին ու ժողովրդէն նորէն խորանին հազիւ թէ դարձուցած՝ մտքիս ու երեւակայութեանս մէջ նորատեսակ խնդիր մը կը ծնանի: Այն թէ եղած է անանկ դար մը, անանկ երկիր մը, անանկ ազգ մը՝ որ չէ թէ մէկ արևուտայլ երկու պայծառ արեգակներու ճառագայթներովը լուսաւորուած ըլլայ, ո՞ր տարի, ո՞ր քաղաք, ո՞ր ժողովուրդ ասանկ երջանիկ օրերու հանդիպած, ասանկ անսովոր պարգևի մը տէր եղած է: Հին ու նոր պատմութիւնները ասանկ դիպուած մը չեն պարունակեր, ու նախկին յիշատակարանները աս քանիս վրայօք բողբոսկին կը լուեն: Վայց ՚ի վերայ այսր ամենայնի կը համարձակիմ ես ըսելու, թէ այնչափ դարերու ժողովուրդներու չի տեսած դէպքը ու բոլոր յիշատակարանաց չի պարունակած դիպուածը ո՛չ միայն հնարաւոր է, չէ՛ թէ մինակ կարող ըլլալու, այլ և եղած ալ, կայ անանկ տեղ մը, անանկ ժողովուրդ մը, որ այնչափ ազդերու ն ու երկիրներուն բնական կերպիւ ալ՝ չի վայլած երջանկութիւնը ինքը գերբնական եղանակաւ գերասլանծ կը վայլէ. ու թէ իմանալ կ'ուզէք, ո՞րն է ան ժողովուրդը, ո՞րն է ան տեղը, ահա ան ժողովուրդը մեր այս ու խոփ մանկունքն են. ան տեղը Չեր աչքին առաջն է, Չեր մէջն է, ու մանաւանդ թէ դուք անոր մէջն էք, աս մեր Արժարանը: Աւ ան երկու արեգակները ահա աս երկու Վլխաւոր Առաքեալները են Պետրոս և Պօղոս, մեր գերասլանծ պաշտպանները, մեր անմահ արեգակները, մեր անշէջ ջահերը որ

6497

իրենց սրայծառ ճառագայթներովը՝ մանաւանդ. աս օրուան օրս բոլոր Արժարանս կը լուսաւորեն :

Աւրախ եղիք հա՛սրս Արժարան նորատունկ, որ ասանկ անդուգական երջանկութեան մը ես հանդիպած, այսօր առաջին անգամը հոս տեղս քու պաշտպաններուդ հանդիսաւոր տօնախմբութիւնը կը կատարուի, այսօր քու ասպագայ բարօրութեանցդ. ու յառաջագիմութեան նախագուշակ նշանները քու ճակատիդ վրայ յայտնի դրոշմեալ կը տեսնուին : Դուք ալ, յարգոյ ունկնդիրք, դուք ալ մասնակից էք աս մեծ ուրախութեանս. դու, ո՞ր գործադուծ Հայրապետ որ այնչափ ատենէն ՚ի վեր փափագած գործքը գլուխ հանելով՝ քու քրտանցդ թէպէտե փոքր արդիւնքը աս օրուան օրս մխիթարութեամբ կը նշմարես, այնչափ աշխատանքով տնկած տունկերդ՝ քու աջոյդ երկնառաք օրհնութեանց ցօղովը՝ այսօր բողբոջներով պտկած կը տեսնես :

Իսկ դուք պատուական հանդիսականք՝ ձեր բարերարութեանց ու բարի նախանձուն օգնութեամբը աս Արժարանիս յաջողելուն վրայ ուրախ եղիք, մխիթարուեցէք :

Սիրելի ընկերակիցք՝ մենք ալ սիրտ առնունք, քաջալերուինք որ ասանկ հզօր պաշտպաններու հովանաւորութեանը տակը ենք ապաւինած, ասանկ հայրագութ Հովուապետի խնամածութեանը յանձնուած, ու ասանկ բարերար ու հոգեւէր ժողովրդեան մը մխիթարութեան նիւթ եղած. բայց մեր զուարճութիւնը մեր քաջութիւնը պիտի աւելնայ՝ երբ որ աչքերնիս անգամ մը աս մեր պաշտպան Առաքելաց մեծագործութեանցը՝ ու դիւցազնական առաքինութեանցը վրայ դարձնենք : Վերոտին հաւատքը կըսեմ ու Պօղոսին քաջութիւնը :

Վերոտ ազքատ ձկնորս իր օրուան սպրուստը ծովուն խորունկ ջրերէն հնարելու ատենը՝ կենարարին մէկ « Ա՛կ զկնի իմ » ձայնին՝ կը ձգէ իրեն այնչափ սիրելի եղած ուռկանը, իրեն մէկ հատիկ նաւակը, ու կենդանի հաւատքով մը Ատուածային վարպետին աշկերտ կը գլուի. զարմանալի հաւատք, այն՝ Նահապետներն ալ հաւատացին,

Մովսէս ալ հաւատաց, ու Վարդարէ՛ներնալ հաւատացին, բայց Աստուածային կողմանէ այլ և այլ ազդմունքներ ու սքանչելագործութիւններ տեսնելէն կամ ընելէն ետքը, բայց Պետրոս միայն թէ իր նաւակը ուր կապելը ու ուռկանը ուր նետելը մտածելու ատեն՝ մէկ երկնային ձայն մը իր ականջը հանդիպելով, մէկէն ամէն ուրիշ մամտութիւն մէկդի կը ձգէ, իր Վարդարէ՛տին ձայնին ու քայլերուն ետեւէն կ'ըլլայ: Անոր Աստուած ըլլալուն վրայ վկայելու առիթը հասիւ գտած՝ մէկէն յառաջ կը դիմէ, բացարձակ կը խոստովանի թէ « դու ես որդի Աստուծոյ կենդանւոյ » իրաւ է կ'իյնայ Պետրոս իր վարդարէ՛տը ուրանալով. բայց աս երեք անգամ ըրած ուրացութիւնը՝ իրեք անգամ « սիրեմ գրեզ » կենդանի հաւատքով լի խօսքերովը բոլորովին կը ջնջէ:

Բայց չի կարծէք թէ ինչպէս արեգակը աշխարհքիս երեւոր լուսաւորելու ատեն՝ իր նախանձոտ ճառագայթներովն ալ լուսնին գեղեցիկ դէմքը կ'աղօտացնէ, ասանկ ալ Պետրոս իրեն առաքինաւ թիւններովը առաքելութեան մէջ հանգիտապատիւ եղբօրը ձիրքերը խաւարցնէ, չէ. չէ. մանաւանդ թէ երկուքին նշոյլները կարծես թէ մէկ զմէկ բեկանելով գեղեցիկ խառնուրդ մը կը սրտածառեն, ու մէկ զմէկ աւելի սրայծառ ու շողշողուն կը ձեացնեն: Ահա՛ Սաւուղէն դարձած Պօղոսն ալ՝ Վրիստոսի Ակեղեցւոյն դէմ իր ունեցած թշնամութեան հոգին Աստուածային հրով մը սրբացած՝ նոյն եռանդեամբ Ակեղեցւոյ հզօր սրտայան կը հանդիսանայ, արիւթիւնը ու քաջութիւնը կատարեալ աստիճան ստացած ըլլալով՝ կ'անարգէ ամէն կերպ նեղութիւնները ու տառապանքները, բանի տեղ չի դնէր որ և իցէ տանջանք ու զրկանք, արձակ համարձակ բանտերէ ատեանները, ու ատեաններէ բանտերը կը վազէ, Հրէայ, Հեթանոս, իշխան, ժողովուրդ, գիտուն ու տգէտ ամենուն անխտիր Վրիստոսի սուրբ հաւատքը կը քարոզէ, քաղքէ քաղք, կղզիէ կղզի, տէրութիւններէ տէրութիւն կ'անցնի ու ամէն տեղ Վրիստոսեան դրօշակը աներկիւղ կը կան-

գնէ, հոն զօրք ու զօրապետ կը դնէ, ու կանցնի հոնկից. հոս նոր բանակ նոր զօրք կը կազմէ. կը դադայ սաղաթէլ ինչու որ աս նոր ելած ահարկու սարապետին իշխանութեան տակը իր ընդարձակ տէրութիւնը ոչնչանալու կը մօտիկնայ, անանկ չէին դողացեր ոչ Պարսից, ոչ հնդկաց, և ոչ այլ բարբարոս տէրութեանց թագաւորները Սեծին Աղէքսանդրի երեսէն, չէ՛, այնչափ աղդու չէին եղած Ռիմոսթէնեայ ճառերը Աթենացւոց վրայ ու Արկերինինները Հուովայ ժողողդեան վրայ, Պօղոս կայսերներուն առջին իրեն համար սրտասխան տալու բնաւ չի վախնար, բոլոր աշխարհք հռչակաւոր եղած Արիստաբոսի դատաւորներուն առջին սուրբ հաւատքը կը քարոզէ, ու անոնցմէ մեծն Ռիոնէսիտը իր կողմը կը քաշէ:

Չի հարարտանան ուրեմն աշխարհքիս հզօր իշխանները, չի պարծին դիտուները ու ճարտարաստները, ինչու որ այնչափ տարիներ, այնչափ աշխատանքով, այնչափ գրուածներով ընել չի կրցածնին՝ Պօղոս Առաքելայն մէկ թղթին մէջ ու մէկ թղթովը մէկէն կատարուած կը տեսնան: Քաջ սարապետ՝ խորիմաց գիտուն ու պերճ ճարտասան, ահա աս մեր սիւն հաստատութեան՝ Արժարանիս պաշտպան երանելի Պօղոսին առանձին ձիրքերը:

Իսկ Պետրոս. Պետրոսն ալ մէմ անկեան գլուխ Ակեղեցւոյ, Քրիստոսի փոխանորդ կը հաստատուի « զի դու ես մէմ և ՚ի վերայ այդք վիմի շինեցից զԱկեղեցի իմ » անոր կը յանձնուին երկնից բանալիքները « տաց քեզ զփականաւորքայութեան երկնից » անիկայ ոչ միայն Քրիստոսի հօտին հովիւ, այլև հովիւներուն հովուապետ կ'ըլլայ, « արածեան զգառինս իմ. . . արածեան զոչխարս իմ » խօսքերով, ու անանկ հովուապետ մը կ'ըլլայ՝ որ ուրիշ հովուաց հաւատքը պակսելու ատենը ալ՝ իրեն ու իր յաջորդաց հաւատքը անպակաս՝ անարատ՝ ամբողջ մնալով՝ մոլորեալ եզբարքը ուղղէ՝ անոնք հաւատքի մէջ հաստատէ « Սիմոն Սիմոն՝ ահա » սատանայ խնդրեաց զձեզ խարբալել իբրև զցորեան. » այլ ես աղաչեցի վասն Բո՛ղի թի պահապանիս հաստաք Բո. և

„ դու երբեմն դարձցիս, և հասարակեցես զԷջար” 40 : ”
Ահա Պետրոսին հաւատքին անխալութեանը ու ուրիշ բո-
լոր հովուաց վրայ ունեցած իշխանութեան յայտնի ապա-
ցոյցը : Ասի՛նչ պատիւ է, ասի՛նչ մեծութիւն, կը հա-
մարձակիմ ըսելու յարգոյ ու կնգիրք, թէ Քրիստոս Տէրն
մեր իր արեամբը կանգնած Ակեղեցւոյն տնօրէնութեանը
մէջ ասկից մե՛նձ պատիւ ընելու չ’ուներ կարողութիւն .
այո՛, չուներ, ինչու որ Պետրոսը իր Աստուածային անձին
փոխանորդ ընելէն ետքը՝ ի՛նչ ալ կը մնար երեւակայելու
զոր Քրիստոս Պետրոսին կարող ըլլար սեփականել, եթէ
ո՛չ, որ և աներեւակայելի է՝ Պետրոսին անձն ալ իր անձին
պէս աստուածացնել :

Այսպիսի երկնային ու անզուգական իշխանութեամբ մը
զարդարուած Պետրոս՝ երբ Պօղոս Ակեղեցւոյն սահմաննե-
րը Ասիա ու Աւրոպիա իր քարողութեամբը կը տարածէր,
Պետրոս անդադար Քրիստոսի վարդապետութիւնը ու հո-
գին Հրէաստանի ժողովրդոց կը քարոզէր, կարծես թէ
Քրիստոսի կենդանութեան առե՛ն իր ունեցած աշխոյժը
ու եռանդը՝ գլուխ եկեղեցւոյ ըլլալէն ետքը՝ մէկ վար-
դապետական ծանրութեան մը հետ փոխադրուելով՝ Հրէ-
աստանի Ակեղեցիները հօր պէս կը մխիթարէր, ասպակա-
նեալ բարքերը ուղղելու կը ջանար, պէտք եղած տեղեր
հրաշքներ անպակաս կը գործէր, որպէս զի իրեն յանձնը-
ուած եկեղեցին բուն նախ իր ծննդեան տեղը աղէկ մը
հաստատուելէն ետե՛ւ՝ ելլայ հոնկից, ու Աստուածային կող-
մանէ բուն կէտ նարատակի ու կենդրոն Ակեղեցւոյ որոշու-
ած տեղը երթայ՝ իր անկործան աթոռը հաստատէ :

Իսկ Պօղոս իր կրակոտ ու արագ բնութեամբը կը կան-
խէ Պետրոսէն առաջ, ակն տիեղելաց Հռոմ երթալու կ’ա-
ճապարէ, Վիպրոսի ծովերը, Եփեսոսի ջրերը, Հանդրին
անգուկքը կը պատռէ, մըրիկներու ու ալէկոծութեանց
մէջէն դէպի Տիւրքեստան ծովը կը հասնի, ո՛չ ան վտանգնե-
րուն սպառնալիքները, ո՛չ ալ ան նաւակոծութեան թշուա-
ռութիւնը զինքը կը վախցնեն, ան փոթարիկներուն, եւ

բակիկընն հովերունն ահաւելի ձայները, ու ան ալիքներուն
սաստիկ գոչունները Տարոնեան փողոյն ձայնը բնաւ չեն
կրնար խափանել. նոյն վասնդ այ մէջն ալ իր մէկ հաստիկ
Վրիստոսը կը քարոզէ : Վայց ան նաւուն նեղութիւնը իր
նեղ սրտին տարածուելու ունեցած ու ժգնու թեան արդելք
մը ըլլալուն համար, կը բաղձար Պողոս ժամ մը առաջ
Հռովմ հասնիլ ու հոն իր քարոզութեանցը ընդարձակ դաշ-
տը գտնել. կը հասնի վերջապէս Հեսպերիոյ գեղեցիկ ե-
ղերքը ու հոնկից ալ Հռովմ քաղաքը, բայց մտած չի մտած
բանտապետները զինքը կը դիմաւորեն, կը բանտարկուի Պո-
ղոս, ձեռուրները շղթայակապ բայց լեզուն աղատ իր Աս-
տուածային քարոզութեան ձայնը բոլոր Հռովմ կը հնչեցնէ,
Հրէայ, Հեթանոս, սյր և կին, գիտուն ու տգէտ կը վա-
զեն ան Աստուածախօս Առաքեալը լսելու համար. իր ձայ-
նին ու ժգնութիւնը բանտին նեղ դռներէն անցնելով, Պա-
լատներուն մեծակառոյց դռներէն ներս կը մտնայ, ու հոն
ալ ամէն ասպականութեանց մէջ շատ սիրտեր կը մեղմա-
ցնէ, շատ հոգիներ կը դրդէ :

Վայց թողունք քիչ մը Պողոս բանտերու մէջ իր առաքե-
լական վիճակին գործքերուն զբաղած ու դառնանք՝ նորէն
Հրէաստան՝ նայելու թէ ի՞նչ գործքերու վրայ է Ալեքեց-
ւոյն գլուխը, Վրիստոսի փոխանորդը :
Ասիկայ ճանչնալով որ իր կեանքին վերջին տարիները արդէն
եկած մօտիկցած են՝ ձեռք կը զարնէ ան մեծ ու Աստուա-
ծային խորհուրդը ՚ի գործ դնելու, սոյն է երթալ Հռովմ
ու հոն Աթուր կանգնելով ու իր մարտիրոսական արիւնո-
վը ներկելով՝ հեթանոսութեան դէմ եղած կռուին վրայ
յաղթութեան վճռական վերջին ձայնը հնչեցնել. կ'ելլայ
ուրեմն ճամբայ որդւոյն Աստուծոյ փոխանորդը դէպ ՚ի
Հռովմ. ու ամէն մէկ քայլ առնելուն կը մօտիկնայ նոյնչափ
կռապաշտութեան վիթխարի Աթուին քայքայուելունն ահ-
ուելի վայրկեանը, կ'երթայ դիմաւորելու ան կայսերական
քաղաքին մէջ իր վարպետին վարդապետութեանը կործան-
ման ջանացող կայսերաց Աթուակից մեծն Սադայէլը ու

վար առնելու զանի ան բարձր դահոյքներէն չէ թէ զինուք
ու զօրքով, այլ իր իշխանութեան բանալիքներովը անոր սրտ-
ւոյն կանգնուած արձանները՝ կուռքերը կըրտոր կըրտոր փշրե-
լով: Ա՛րեթայ անանկ տեղ մը ուսկից կարող ըլլայ՝ մինչուկ
ան ատեն հրատարակուած կուսարաշուութեան օրէնքներուն
տեղ՝ Քրիստոսի օրէնքները ու պատգամները բոլոր աշխարհ
քարոզել: Ա՛րեթայ վերջապէս անանկ տեղ մը, ուր խա-
խուտ ու աշխարհային կետարութեան Ա՛թոռներուն դիմա-
ցը անանկ կայսերութեան Ա՛թոռ մը կանգնէ հաստատե,
որ Հռովմայ տէրութեան չի տիրած տեղերուն ալ տիրէ,
անոր չի յաղթած ազգերն ալ յաղթէ, ու անիկայ իյնալէն
կտքն ալ ինքն անկործան մնալով՝ Ատտիկանին բարձրու-
թենէն՝ Արտուածային պատգամները կետարներուն փշրած
Ա՛թոռներուն ու վրած Պաշտաններուն վրայէն հնչեցնելով
բոլոր երկրագունտը հռչակէ: Ար տենայ Սատանայն աս
ամէն ըլլալիքը ու ահռաները կըձտելով օրհատականի մը
պէս կը գոռայ, բայց պարապ տեղ: Ա՛րեթայ աս երկու
Առաքելոց մարմինները մէջէն վերցնելուն պէս՝ իր տէրու-
թիւնը ապահով կարծելով կը դրդէ Հռովմայ ժողովուրդը
ու՝ Արոն կայսրը անոնց դէմ՝ զանոնք իբր դրդուիչ ու
իր աշխարհական իշխանութիւնը ձեռքէն յափշտակելու
զինեալ աստատմբներ ձևացնելով: Բայց ամա՛ս. չի գի-
տէր թէ անոնց մարտիրոսական արիւնք իր անկմանը վճը-
ռոյն երկրորդ կնիքը պիտոր ըլլայ, չգիտէր թէ անոնց ա-
րեամբ թրջած երկիրը անսպառ ու անհատնում բոյսեր
բուսցնող երկիրմը պիտի ըլլայ՝ Եկեղեցւո՛ւ: Չգիտէր թէ ա-
նոնց դատապարտութեան ձայնը Քրիստոսի Եկեղեցւոյն
ազատութեան երկրորդ վճիռը պիտի ըլլայ: Ամբաստա-
նութիւն Առաքելալք կը դատապարտութիւն, Պետրոսին մահը
ինչպէս կը վայլէր Վողգոթայ լեռան վրայ մեռած Քրիս-
տոսի փոխանորդին՝ Հռովմայ եօթը բլուրներուն ամենէն
բարձր բլուրին վրայ կը կատարուի՝ նշանակելով թէ իր իշ-
խանութիւնը կետարաց սարստաններուն վրայ ալ կը տարա-
ծուի: Խաչին վրայ կը մեռնի ինչպէս կը վայլէր նոյնպէս

խաչի վրայ մեռած Քրիստոսի փոխանորդի մը . բայց գլխի վայր կը խաչուի , որպէս զի իր տիրոջը հետ համապատասխան չըլլալը հասկցուի : Ասոր մահուան տեղը ետքը հաւատաշեղալք գեղեցիկ տաճար կը կանգնեն , որ տասնիկ պատերազմի մէջ ալ (*) իր անաստան Աթոռին պէս անվնաս , ու իր տնտաղիւտ հաւատաքին ու դաւանութեանը պէս անարատ կը պահուի : Իսկ Պօղոս Հռովմէն դուրս իր մահը կ'ընդունի , մարմնէն բաժնուած գլուխը դեռ արիական սասակութիւնը չի կորսնցնելով՝ ընդօստ կը ցատկէ՝ ու լեզուն իրեն ստորութիւնը բրած բաղլը անուն Յիսուսը ան դալարեաց վրայ կը հնչեցնէ , ասոր արձագանքը չէ թէ բըրոց ձայնը կ'ըլլայ , այլ յստակ ջրերու աղբերակունք՝ որ մէկէն հոն կը բղխեն ,

Ահա ասանկ նորաբոյս Ալեգեցւոյ երկու գլխաւորնե լըն ալ իրենց ընթացքը փառաւորացէս կատարելէն ետքը՝ Սարախրոսական պատկներով զարդարուած յախտե՛նականութեան կը փոխուին :

Բայց չի կարծուի թէ Պետրոսին մահուանքը իր Աթոռն ալ վերցուած ըլլայ , կը յաջորդէ անոր Անուս՝ Ալեոս՝ Անակլետոս , ու այլ քահանայապետներու անընդհատ շար մը , մինչուկ հիմակուան Պետրոսեան նաւակին կառավարիչը անմահանուն մեծն թ. Պիոս : Աչ նախկին դարերուն ահաւելի հալածանքներէն կը սասանի ան Վահը , ոչ միջին դարերուն թանձր տղիտութենէն , ու բարբարոսաց համակործան արշաւանքներէն կը խախտի , ու ոչ ալ վերջին լուսաւորեալ դարերուն սրայծառութենէն կ'այլայլի : Իրաւամբ ապա մեր Սուրբ Վրիգոր Աւետարիչը զանի « մէմ հատատաւութեան ամենայն եկեղեցւոյ » կ'անուանէ , իրաւամբ քերթող խորենացին « փակակալ արքայութեան , հիմն Ալեգեցւոյ » կըսէ . իրաւամբ աղօթասէր Նարեկացին « Ա էմ հաստատեալ , արձան հիմննացեալ » կը կանչէ . իրաւամբ

* Անարկութիւնը 1850 ին Գաղղիացւոյ Հռոմ ընկերավարաց բընտութենէն խողտելու համար տուած պատերազմին է , ու յիշուած տաճարը tempietto di Raffaello բուածն է :

կերդէ Շնորհալին « Աւ դ ու Հ ու զ մ . . . Ա կ ե ղ ե ջ ի ան-
շարժելի ՚ի Ա փ ա յ ե ա ն շ ի ն ե ա լ վ ի մ ի , դ ր ա ն յ դ ժ ո ի ս յ ան յ ա ղ-
թ ե լ ի » . ի ր աւ ա մ բ պ եր ճ լ ա մ բ ր ո ն ա ջ ի ն « Ա լ ու ի ս յ ե ա զ լ խ ո յ ,
վ է մ հ ա ս տ ա ա տ ու թ ե ա ն ք ն աւ ի յ » կ ը ք ա ր ո զ է . ի ր աւ ա մ բ
վ եր ջ ա պ է ս ա յ ս օր մ եր ս ու ր բ Ա կ ե ղ ե ջ ի ն ա լ ի ր շ ա ր ա կ ա ն ն ե-
ր ու ն մ է ջ « Ա լ ու ի ս ս ու ր բ հ աւ ա տ յ , հ ի մ ն Ա կ ե ղ ե ջ ո յ , վ է մ
ան վ ա ն ե լ ի ՚ի դ ր ա ն յ դ ժ ո ի ս յ » ձ ա յ ն եր ու լ ը կ ' օր հ ն ա բ ա ն է :
Ի ս կ Պ օ ղ ո ս « ս իւ ն հ ա ս տ ա ա տ ու թ ե ա ն , ս ու ս եր հ ա տ ու , բ ե-
ր ա ն Վ ր ի ս տ աս ի , փ ա ղ տ ա ր ո ն ն ե ա ն » պ ա տ ու ա ն ու ն ն եր ու լ ը
խ օր հ ու ր զ ա բ ա ր կ ը փ աւ ա բ ա ն ա ի :

Ի նչ պ է ս հ ա պ ա , յ ար զ յ Աւ ն ի ն զ ի ղ ք , չ ու ր ա խ ա ն ա ն ք մ ե ն ք
դ խ ա թ ի մ ա ն կ ու ն ք ս , ա ս ա ն կ եր կ ու Վ լ ի աւ ուր Ա ռ ա ք ե լ ո յ
պ ա շ տ պ ա ն ն ու թ ե ա ն տ ա կ մ ե ղ ա պ աւ ի ն ու ա ծ տ ե ն ն ա լ ո լ ,
Ի նչ պ է ս չ ի ք ա ջ ա լ եր ու ի ն ք մ եր պ ա շ տ պ ա ն ն եր ու ն մ է կ ը Վ ր ի ս-
տ աս ի փ ի խ ա ն ուր զ , եր կ ն ի յ փ ա կ ա կ ա լ . ի ս կ մ է կ ա լ ը ա ու ա ք ե-
լ աւ թ ե ա ն գ իւ ց ա ղ ն ու ա խ ո յ ե ա ն ը լ լ ա լ ո լ : Վ ա յ յ լ ո կ մ ա տ աւ ու-
ր ա կ ա ն ու ր ա խ աւ թ իւ ն մ ը ու խ օ ս ք ո լ մ ի ն ա կ ք ա ջ ու թ իւ ն մ ը
բ աւ չ է մ ե ղ ի ո լ ս իր ե լ ի ը ն կ եր ա կ ի յ ք , ա ս չ է մ ե ղ ս է պ ա-
հ ա ն ջ ա ծ ը մ եր վ եր ա տ ե ս ու չ Վ եր ա պ ա տ իւ Վ ի ս տ ա պ ե տ ի ն ,
ա ս չ է Ա ս տ ու ա ծ ա ս էր ժ ո ղ ո լ ը դ ե ա ն մ ե ղ մ է ս պ ա ս ա ծ ը , ա յ լ
ան է , որ ա ս մ եր գ եր ա պ ա ն ծ պ ա շ տ պ ա ն ն եր ու ն հ օ լ լ ա ն ա-
ւ ուր ու թ ե ա ն տ ա կ ա պ աւ ի ն ա ծ ' ա ն ո ն յ վ ա ր ք ը ու դ օր ճ ք եր ը
մ ե ղ ի օր ի ն ա կ բ ու ն ն ք , ա ն ո ն յ հ ե տ ե ի ն ք , ա ն ո ն յ ն մ ա ն ո ղ
ը լ լ ա ն ք մ եր բ աւ ա կ ա ն ու թ ե ա ն ք հ ա մ ա չ ա թ . ա հ ա ' ա ս է ա մ ե ,
ն ու ն դ ի ս տ օ ծ ը ' ա ս է ն ո յ ն ա պ է ս մ եր պ ա շ տ պ ա ն ն եր ու ն կ ա մ ք ը ,
ու ա ս ս ի խ թ ը լ լ ո յ մ եր վ ա խ ճ ա ն ը . Պ ե տ ր ո ս Ա ռ ա ք ե լ ու ն պ է ս
ու ղ ղ ա փ աւ ս ու ր բ հ աւ ա տ յ մ է ջ հ ա ս տ ա տ ա ն ս ա տ ա ն մ ն ա լ ո լ
ան ուր մ ա ք ր ու թ իւ ն ը և ոչ ի ս կ ա մ ե ն ա փ ո ղ ք ս ր ա տ ո լ մ ' ա լ
ա ղ ա տ տ ե լ , ու ա ն ուր ա մ բ ո ղ ջ ու թ ե ա ն հ ա մ ա ր ա մ է ն բ ա ր ի ք
զ ո հ մ ա տ ու ց ա ն է լ է ն զ ա տ ' ա ր իւ ն ի ս ա լ ա ն հ ր ա ուր ա շ տ ս ր ա-
ս ի յ գ զ է մ մ եր հ ա յր ե ն ա կ ց ա յ տ ա ր ի ն եր ո լ տ ու ա ծ կ ր օ ն ա կ ա ն
պ ա տ եր ա ղ մ ն եր ու ն մ է ջ թ ա փ ա ծ ա ր իւ ն ն եր ու ն հ ե ա խ ա-
ն ե լ ու պ ա տ ր ա ս տ ը լ լ ա լ : Պ օ ղ ո ս ի ն պ է ս ա լ ' գ ի ս ու թ ե ա ն յ հ ե տ
ա ու ա ք ի ն ու թ իւ ն ն եր ն ա լ յ օ ղ ե լ ո լ ' ա ր ի ու թ ե ա ն հ ո ղ ի ն ս տ ա-

նալ, Վրիստոսեան հաւատքը ամբողջ անարատ արձակ հա-
մարձակ բոլոր Հայաստան քարոզել, ոչ վտանդներէն փախ-
ջիլ, ոչ հակառակորդներու սարսնալիքներէն ետ մնալ.
ամբաստանուիլը ու զրոյարատու իլը Վրիստոսի անուանը հա-
մար Պօղոսին պէս մեղի երջանկութիւն սեպել, Պօղոսին
պէս քաղքէ քաղաք ծովէ ծով անցնիլ, ամէն տեղ Վրիս-
տոսի հաւատքը քարոզել. կասպից ծովուն քովերէն, կոր-
դաց լերներուն վրայէն, ու կէքսիներան ծովուն ահուելի
եղերքներէն Վրիստոսի անունը՝ հռովեական Սուրբ հա-
ւատքը հռչակել: Պետրոսի յաջորդաց կայսերական կու-
տանց փրատակներուն վրայէն Սուրբ Աւետարանը քարո-
զելնուն պէս, մենք ալ մեր կարողութեանը համաջամի Առ-
սաւորչեան տաճարներէն թորգումեան տանը աւերածնե-
րուն ու քայքայեալ Ալեքեղեցիներուն վրայէն անոր Վիսնա-
կան ու մանաւանդ Արօնական վերանորոգութեան ձայնը
հնչեցնել: Պօղոս Առաքելուն ան հռչակեալ յոյն Ատենա-
կելաց պաշտած անձանօթ Աստուածը Վրիստոս Տէրն մեր
ըլլալը ցուցնելուն պէս՝ ցըցընէնք մենք ալ մեր հայրենա-
կից ժողովրդոց թէ Ալեքեղեցական երգերու մէջ երգած
“ վէմ հաւատոյ ” գլուխ Ալեքեղեցւոյ “ Պետրոսին Աթոռը
Հռովմ դեռ անկործան կըմնայ, ու մեր նախնի հարց ան ”
հայրապետ հայրապետաց ” անուանած Հռովմոյ քահանա-
յապետներուն յաջորդը հիմայ ան Աթոռին վրայ նստող
թ. Պիոսն է :

Իայց աս դործքերս ինչպէս մեր տկարութիւնը կարող
է կատարել եթէ ոչ դուք ո՞ր երկնային մեր պաշտպաններ
մեղի ուժ ու կարողութիւն չտալու ըլլաք. Իուք էք մեր
յոյսը ու մեր ասրաւէնը: Իուն անուանեալդ Աեփաս, դու
հաւատքի հաստատութեան շնորհքը ա՛ռ մեղի. դու քու
սուրբ Աթոռիդ շքին տակը ապահով հանգչած Ուրբանեան
Տարածանոցին մէկ գաղափարը աս մեր սիրելի Արթարա-
նը՝ դուն նոյնպէս պաշտպանէ, հաստատէ ասոր հիմերը,
զօրացուր մանաւանդ մտաւորական արմատները, դուն ա-
սոր վէմ անկեան եղի՛ր :

Իսկ դու մեծդ Պօղոս տուր մեզի քու արիութեանդ հոգին վառէ՛ մեր սրտին մէջն ալ քու բորբոքեալ սիրոյդ կայծը . քու քարոզութեանդ հոգւոյն մեզ ալ մասնակից ըրէ , դու քու հատու սուսերովդ աս Վարժարանս ամէն կերպ փորձանքներէ պաշապանէ , դուն եղիր ասոր սիւն հաստատութեան :

Պաշտպանեցէք նոյնպէս ո՛րք Նաբեալք Վուսաւորչեան Նկեղեցւոյն Նթուին վրայ նստող Աեղբեսորոսին Յաջորդին պատգամները անվեհեր կատարող աս Վարժարանիս հիմնադիրը՝ մեր Վերապատիւ Նախագահ Նստովն Նպիսկոպոսապետը , դուք անոր վշտացը սփոփանք եղիք . դուք անոր աս տեղւոյս համար թափած քրտինքները պրտղաբեր ըրէք : Դուք նոյնպէս իրեն Վեհափառ ձեռնտու մեր գորովասիրտ առատաձեռն Նգգապետը ձեր հզօր հովանաւորութեան տակը անփորձ պահեցէք . դուք նոյնպէս բարենախանձ փութով գործակից պաշտօնեաներն ալ ձեր պաշտպանութեան տակը ապահովցուցէք :

Իսկ այս բարերար ժողովուրդը , զանի ալ , ո՛վ տուրք Նաբեալք պաշտպանեցէք , վարեցէք անոր սրտին մէջ բարերարութեան հոգին ու եղբայրսիրութեան հուրը . արդիւնաւոր ըրէք աս Վարժարանիս յառաջագիմութեանը վրայ անոր ցուցուցած փափաքը , ու յայտնած ջանքը :

Վերջապէս դուք աս Նախագահական աթոռս բոլոր իր Վղերովը ու Դողովրդովը ձեր հովանաւորութեանը տակ անփորձ պահեցէք աս աշխարհ , որպէս զի կարող ըլլանք անդ իի աշխարհքնալ Ձեր հետը ամենասուբ Նրբորդութիւնը օրհնել և փառաբանել ՚ի յաւիտեանս ժամանակաց ամէն :





... die ...
... die ...
... die ...
... die ...
... die ...


... die ...
... die ...
... die ...
... die ...
... die ...
... die ...
... die ...
... die ...
... die ...
... die ...

... die ...
... die ...
... die ...
... die ...
... die ...
... die ...
... die ...
... die ...
... die ...
... die ...









20

